ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՃԸ՝ ԱՌԱՆՑ ԱՍՏԾՈ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԾՆՆԴ. 2.8-9

8 *Եվ Տեր Աստված մի պարտեզ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմ, և իր արարած մարդուն դրեց այնտեղ:* ***9*** *Եվ Տեր Աստված հողից բուսցրեց տեսքով հաճելի և քաղցրահամ պտուղներով բոլոր ծառերը և պարտեզի մեջտեղում՝* ***կենաց ծառը*** *և* ***բարին ու չարը գիտենալու ծառը****:*

16 *Տեր Աստված պատվիրեց մարդուն՝ ասելով. Պարտեզի բոլոր ծառերից համարձակ կեր.* ***17*** *բայց* ***բարու և չարի գիտության ծառից մի՛ կեր****, որովհետև այն օրը, երբ նրանից ուտես, անպայման կմեռնես:*

Ինչո՞ւ Աստված բուսացրեց Բարիի և Չարի գիտության ծառը Եդեմի պարտեզում:

dah'-ath – דַּעַת – գիտություն, ընկալում, հմտություն, հասկացողություն:

Աստվածաշնչում «ծառը» հաճախ խորհրդանշում է՝

- *Աստծո արքայության աճ (Մատթ. 13),*
- *Մարդու կյանք (Սաղմոս 1, Երեմիա 17):*

  Նա ջրերի մոտ տնկված ծառի պես է...

  Արդէն կացինն էլ ծառերի արմատին դրուած է. արդ ամեն ծառ, որ բարի պտուղ չէ բերում, կկտրուի ու կրակի մէջ կգցուի (Մատ. 3:10):

- *Գիտելիք (Ծննդոց 2–3),*

I. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԱՌԱՆՑ ԱՍՏԾՈ՝ ԱՆՕԳՈՒՏ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է:

Ծնն. 3.22 - Եւ Եհովա Աստուած ասեց. Ահա Ադամն եղավ ***իբրեւ*** *մեզանից մէկը՝ որ բարին եւ չարը* ***գիտենա****.*

Դանիելի մարգարեությունը կանխատեսեց այս նույն երևույթը՝

Դանիել 12.4 – Իսկ դու, ո՛վ Դանիել, գաղտնի՛ պահիր այս խոսքերը և կնքի՛ր գիրքը մինչև վախճանի ժամանակը. շատերը պիտի թափառեն, և ***գիտությունը պիտի շատանա****:*

Այսպիսով, գիտության աճը վերջին ժամանակներում կարելի է հասկանալ երկու տեսանկյունից՝

*Մարդկայինը ընդեմ **Ճշմարտության Գիտության***

- ***Ընդհանուր գիտելիք***

1900 թ.՝ *գիտությունը կրկնապատկվում էր մոտ յուրաքանչյուր **100 տարին մեկ**:*

1945 թ.՝ *Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ մոտ յուրաքանչյուր **25 տարին մեկ**:*

1980–1990-ականներ՝ *համակարգիչների, արբանյակների և ինտերնետի զարգացմամբ՝ աճը զգալիորեն արագացավ:*

Այսօր՝ *գիտելիքը կրկնապատկվում է մոտ յուրաքանչյուր 12 ամիսը մեկ: Նույնիսկ յուրաքանչյուր 12 ժամում:*

- *Մենք ապրում ենք ակնթարթային հաղորդակցության դարաշրջանում...*

*Պողոսը զգուշացրեց Բ Տիմոթեոս 3.7-ում,. «որոնք միշտ ուսանում են ու երբեք չեն կարողանում հասնել **ճշմարտության գիտությանը**»:*

Ճշմարտության Գիտություն

***Հոգևոր գիտելիք** (Աստծո խոսքի և Նրա մարգարեական ծրագրի ավելի խորը ըմբռնում):*

- *Սողոմոնը հասկացավ այս Գիտության իրական իմաստը. ոչ թե պարզապես տեղեկություն ունենալը, այլ **բարին ու չարը զանազանելու կարողությունը**:*

*Երբ նա դարձավ Իսրայելի թագավոր, Աստված ասաց՝ **«Խնդրի՛ր, ինչ որ ուզում ես»**:*

***9** Ուրեմն **<u>իմաստությո՛ւն</u>** տուր քո ծառային՝ քո ժողովրդին դատելու, **բարին ու չարն իրարից զանազանելու**... **10** Տիրոջը հաճելի եղավ այդ խոսքը, որ Սողոմոնը խնդրեց: (Գ Թագ. 3):*

Այսպիսով, Սողոմոնը ստացավ այն շնորհը, որը Ադամը չգործադրեց:

*Եդեմում Բարիի և Չարի Գիտության ծառը խորհրդանշում էր **ընտրություն**. վստահել Աստծո խոսքին, թե՞ ապավինել սեփական դատողությանը (Ծննդոց 2.16-17):*

- ***Այսօր նույն ընտրությունը կրկնվում է՝***
  - *Ճշմարտության և խաբեության միջև:*
  - *Հնազանդության և անհնազանդության միջև:*
  - *Աստծուն ապավինելու և ինքնաբավության միջև:*
  - *Ամեն փորձություն մեզ նորից կանգնեցնում է այդ «ծառի» առջև:*

II. ՃՇՄԱՐԻՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂՆ Է (ԱՌԱԿԱՑ 1.7):

Սողոմոնը շահեց՝ խնդրելով Աստծուց սիրտ, որ կարող է զանազանել բարին չարից:

- *Գիտությունը առանց Աստծո՝ **ունայնություն է**:*

ԱՆՕԳՈՒՏ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ

Ադամը փորձեց ստանալ գիտություն առանց Աստծո:

Այսօր նույն մարտահրավերն է՝

*Թշնամին շարունակում է շշնջալ նույն խոսքերը.. **«Կլինեք իբրև Աստված...»** (Ծննդոց 3.5):*

- *Բաբելոնի աշտարակը կառուցվեց հենց այդ նպատակով՝ ստեղծելու համաշխարհային համակարգ՝ անկախ Աստծուց:*
- *Եգիպտոսի կախարդներն ու իմաստունները որոշ բաներում կարողացան ընդօրինակել Աստծո գործերը.*

*Բայց շուտով նրանք խոստովանեցին. **«Սա Աստծո մատն է»** (Ելից 8.19):*

Զորությունն ու փառքը Քրիստոսինն են, և հաղթությունը տրվում է Նրա արյունով ու Սուրբ Հոգու օծությամբ:

Մարդկային գիտությունը սահմանափակ է և ի վերջո ճանաչում է Աստծո գերազանցությունը:

***Հայտնություն 13ը մեզ հայտնում է այն մասին որ** Մարդկային գիտությունը, տնտեսությունը և տեխնոլոգիան կդառնան Գազանի իշխանության հիմքը:*

*Այսինքն՝ գիտության գագաթնակետը կավարտվի **ապստամբությամբ Աստծո դեմ**:*

Բայց վերջնական հաղթանակը Քրիստոսինն է.
Հայտնություն 19-20:

III. ՔՐԻՍՏՈՍՆ Է ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

*Կող. 2.2-3 - **2** ամենայն ճոխությամբ հասնենք կատարյալ իմաստության, այսինքն՝ Աստծու և Հոր և Քրիստոսի խորհուրդը ճանաչելուն. **3** որի մեջ են թաքնված իմաստության և գիտության բոլոր գանձերը:*

Խաչը դարձավ նոր Կենաց ծառը:

Հայտնություն 2.7 – Ով կհաղթի, նրան կտամ ուտել Կենաց ծառից, որ Աստծո դրախտի մեջ է:

*Բ Կոր. 10.4-5 – քանզի մեր մարտի զենքերը մարմնավոր չեն, այլ զորավոր են Աստծով՝ բերդեր քանդելու. մենք դրանցով քանդում ենք ծածուկ մտքերը և ամեն բարձունք, որ **Աստծու գիտության դեմ է գոռոզանում**, ու գերում ենք ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար:*

- *Աստծու գիտության դեմ է գոռոզանում...*

- *Քրիստոսն է մեր հաղթանակը, և Նրա խոսքը՝ մեր սուրը, որով հաղթում ենք խավարի ամեն բարձունք և սուտ գիտություն:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ